

ՄԱՐԱԹԱՐԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ, ԹԻՒ 53 ՆԻՒ ԵՈՐԻ, ՇԱՐԱԹ, ՆՈՅԵՄԲԵՐ 12 1898 ԳԻՆ 3 ՍԷՆԹ

ՄԱՆՐԱՍԻՆՈՒՐԻՔ

Անուշղակի աղբուրէ մը կը լսենք թէ Գեղարքունիքի մէջ...

Քաղաքի քանոնադրոյն կը հարկաւ ծրարուի մեր քաղաքը...

Սարգիս Արմաշի տնտեսական կարգը...

Քաղաքի քանոնադրոյն մէջ վարչական...

Քաղաքի քանոնադրոյն մէջ վարչական...

Քաղաքի քանոնադրոյն մէջ վարչական...

նի կը դիմէ ամուսնալուծութիւն խնդրելու...


Ցաւալի է որ այսպիսի խնդիրներ կը ծագին...

Անցեալ կիրակի օր Ուսթըրի հայ բողոքական...

Վերջի շաբթուս մէջ քաղաքի հասան հետեւեալ...

Յատաշիկայ կիրակի Փաթըրընի գաղթական...

Վստահելի է չէ որ խալի նորոգել քաղ...



ՁԵՅԹՈՒՆ ՍԻՒՆԱԿԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԱՆՁԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Տիար Յ. Թաւշանճեան մեծամասնութեան քուէն...

MR. H. TAVSHANJIAN, 343 B'WAY, NEW YORK CITY.

Անցեալ կիրակի երեկոյ Ձիմի Գորնըր հօլի մէջ...

Մէլիմի Թանճախումը պաշտօնական նամակաւ...

Փոխգործակալ յանձնարարութեան պիտի քուէն...

ԱՂԱՏ ԼՍՍՐԱՆ

Ձիմի Գորնըր հօլ.

Թիւ 57 Ուէսթ 25րդ փողոյ:

Պիտի խօսի Տըթ. Յ. Արշակունի արքայական...


ՔԱՂԱՔԱԿԱՆ

Թուրք-Գերմանական նիզակիցութեան լուրը...

Ռուսիա միւս կողմէ Ձիմապատի մէջ գաւառ մը...

Քաղաքի նոր նախարարութեան ըրած մէկ...

Սպանիական Ամբիկեան խաղաղութեան...



ՇԱՐԱԹԱՐԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱԿԱՆ
Կը հրատարակուի ամէն Շաբաթ օրեր,
ՏԻԳՐԻՍ Հրատարակչական Ընկերութեան կողմանէ,
Յ. ՂԱՒՄՐԻԿԵԱՆ, ԳԱՆՁԱՊԵՏ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Table with 2 columns: Subscription type and price. Includes 'ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ՈՒ ԲԱՆԱՍՏԱՅԻ ՀԱՄԱՐ' and 'Տարեկան 1 50'.

Մտար կամ նամակ ուղղել հետեւեալ հասցէին՝
To the DICKRIS PUBLISHING CO., 145 EAST 23D ST, New York City

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter.

ՆՈՒ ԵՈՐԻ, ՇԱՐԱԹ, ՆՈՅԵՄԲԵՐ 12 1898.

Գ Ո Ր Ծ Ա Դ Ո Ւ Լ

Ամէն երկրի մէջ օրէ օր գործաւորի վիճակը երթալով կը վատթարանայ: Միլիոնաւորներ իրենց միլիոնները միացնելով գործի հրապարակը կը գրաւեն՝ հեռացնելով ասպարէզէն ամեն անոնք որ մեծ գրամագլուխ չունին, և չեն կրնար գիմանակ կուսոյն: Այսպէս ասպարէզին տիրացած՝ կսկսին ճնշել գործաւորը, որ անուսով ազատ, բայց գրապէս գերի է կամաւ գերի:

Գարեթի վեր հարուստը իշխած է աղքատին մերթայոյս և մերթ այն ձևի տակ: Կար ատեն մը որ մարդիկ կը կարծէին թէ եթէ կառավարութեանց միապետական ձևը հասարակապետութեան փոխուի, ամէն ոք կարող պիտի լայ հանգիստ կեանք վարել: Բայց ներկայիս գոյութիւն ունեցող հասարակապետութեանց ժողովրդի ներքին վիճակը ցոյց կուտայ թէ գործաւորի, աշխատողի վիճակը փոխանակ բարեօրէնում վատացած է:

Նիւ Եորքի հինգերորդ պողոտայի վրայ գործաւորի մը ազգածին պէս քաղեր ազատութիւն չի նշանակիր. ոչ ալ բանորի մը վանտէրպիտի հետ համարձակ խոսակցելը ազատութիւն կը նշանակէ: Բանւորն կամաւոր գերի է և գերի պիտի մնայ ցորքան իր ուժերն ի մի չի հաւաքուին կուսելու իրարու վրայ դիզող միլիոններու դէմ, որոնք ատանկալ մը անձեռու երջանկութեան, իսկ ամբողջ բանւոր դասակարգին թշուառութեան պատճառ գործած են:

Եւրոպայի մէջ երկար ատենէ ի վեր սկսած է բաւորական միութիւնը սեղ գտնել և հիմ ընել: Բայց Ամերիկայի մէջ այդ շարժումը տակուին մանուկ է և թերութիւններով լի: Եւրոպայի մէջ գործաւորներ կը միանան ընդհանուր շահուն համար, իսկ հոս կը միանան անձնական կամ սեղային շահու շարժառիթով: մէկ խօսքով Ամերիկայի գործաւորական ընկերութիւններն իրարու հետ կապ չունեցող, անկողնուք և խախտու կազմակերպութիւններ են, եթէ երբէք ներքին է կազմակերպութիւն անուանելու:

Երկու տարի առաջ Լինի մէջ գործադուլ ընող գործաւորներ Միլիթրոս գործադուլ աւելու գացին: Սկզբունքի տէր եղողը այդպէս շէր ընել:

Ամերիկայի մէջ գործաւորներն կը կուսին գրամագլուխի հետ երկու միջոցներով, գործադուլով և քուէով: Բայց Եւրոպայի բանւորն քուէարկելու շատ արածութիւն չունի, և ուստի շատ բան չը կրնար ընել այդ անսակէտով: Ամերիկայի գործաւորն իր քուէի բացարձակ տէրն է. անոր քուէն հաւասար արժէք ունի գրամագլուխը քուէին, և իր վիճակ լարուցելու մեծ պատեհութիւն ունի, եթէ փոխանակ իր քուէն գաւաթ մը գարեջրով հաստափոր Հաննային ծախելու ի նպաստ իրեն գործածէ:

Գործադուլը լաւ դէպք մէ գրամագլուխի հետ կուսելու համար: Բայց լաւ դէպք գէշ ձեւերի մէջ գործածողը կը զնտէ: Գործադուլին միանալու է նաև հաւաքական քուէի դէպք: Բանւորական միութիւններ ստրկելու են իրենց քուէին արժէք տալ ու զայն գործածել զիտնալ:

Գործադուլի ժամանակ կառավարութիւն և գրամագլուխ ձեռք ձեռքի տուած կը կըտուին բանւորի դէմ: Կառավարութեան զորքերը դէպքի ոյժով կը ջնջեն բանւորի իրաւունքը: սովորական եղեր է փողոցի վրայ գնտակահար ընել սովալուրու բանւորը որ ապրելու համար կը կըտուի: Կառավարութեան այս անիրաւ ընթացքը բանւորի քուէն կրնայ ուղղուի: Ահա թէ ինչպէս—1. Գործաւորական միութիւններն ներքին ոյժ գոյացնելու են իրենց մէջ, իբրև քաղաքական կազմակերպութիւն: 2. Տեղական, նահանգային և ընդհանրական ընտրութեանց ժամանակ իրենց ներկայացուցչի միջոցաւ դիմելու են ընտրելիներուն՝ խոստանալով իրենց քուէն այն ընտրելիին տալ որ կը խոստանայ, գործադուլի ժամանակ, փոխանակ իրենց դէմ կուսելու, իրենց օգնէ՝ ինչ ինչ բարեփոխումներ մտցնելով գործաւորական օրինաց մէջ:

Մենք Հայերս ալ՝ մեծաւ մասամբ բանւոր ըլլալով՝ մեծ դեր ունինք խաղալու այս խնդրոյն մէջ: մեր պարտականութիւնն է ոյժ տալ Ամերիկայի գործաւորական միութեանց, և ոչ թէ ջլատել զանոնք:

Ա. Ս. ԼԵՒՈՆԵԱՆ
Ն Ա Հ Ա Տ Ա Կ Ա Ց Տ Օ Ն Ն

Անցեալ Կիրակի օր Ամերիկայի Հայ Բողոքական ազգային մեր վերջի 100 հազար նահատակաց յիշատակը տօնեցին իրենց եկեղեցիներու մէջ: Բարաքիտ Բողոքական ազգայիններն այս տօնը կատարեցին իրենց յատուկ մատրան մէջ ի ներկայութեան 150ի չափ երկսեռ ազգայինց: Օրուան քարոզը խօսեցաւ Պատ. Բէմալեան, որ Պոսթոնէն հրաւիրուած էր այս առթիւ: Այդպէս քարոզիչը նահատակաց բերնէն քանի մը այնպիսի պատուէրներ տուաւ իր ունկնդիրներուն որ իրաւունք տուաւ մեզ կարծել թէ Պատ. Բէմալեան Ամերիկայի հոյ քարոզչաց ամենէ ողջամիտն կամ ողջամիտներէն մին է: « Մենք, ըսաւ ի մէջ այլոց, վիճակեալ ենք ազատելու: յուսահատելու չենք. անոնք որ կը յուսահատին, կը մեղանչեն: Սխալ էր արդք յեղափոխեալ հրոշակել երբ բաւական պատրաստութիւն չունէինք: Մեր խնդիրը, խաղաղութիւն տիրած ժամանակ սկսելու չէինք: Յեղափոխական գործը ազգին ամենէ խոհուն ու փորձառու դասու ձեռքով կատարուելու էր: Մեր պարզ ու արդար դատին օտար նիւթ խառնելու չէինք: Ազատութեան գերը միայն արիւն չէ, այլ՝ լոյս և արիւն »:

Պատուելի մատանիք ըրաւ ազգին մէջ տիրող անհամաձայնութիւններն, կուսակցական կուսակցներն ու լրագրաց քաղաքականները: Պատ. Բէմալեանի ինչ ինչ տեսութեանց չի կրնալով իսկ հաշտուիլ, խոստովանելու ենք սակայն թէ իւր քարոզ ընդհանուր կերպով՝ գնահատելի խրատական մէք որ կրնար հզօրագոյն դաս մը ըլլալ նաև Պատ. Պաղոյեանի, որ ուշադրութեամբ մտիկ ըրաւ մինչև վերջ:

Օրուան ատենախօսէն յետոյ Պատ. Պաղոյեան ալ քանի մը խօսք ըսաւ. բայց ճշմարտութիւններն խոստովանելու համար ըսելու ենք թէ սա իւր դատարկ խօսքերով ու ճարտասանական անձեթեթ ձևերով նախորդ քարոզչի թողուցած խոր տպաւորութիւնն աւելց ըրողութիւն, և երբ եկեղեցու տարեկան հաշիւները երեան ելան ու «Աստուծոյ համար նուէրներ» սկսեցին արձանագրել, բարկութիւն ու պաշտօնը նշմարելի եղան, ու կարծես ազգաբարեկալ ամպոնն անգամ բողբոջ սկսեց. մենք գարմացանք սակայն թէ ինչու ծաղիկներուն վրայ հանգող շինծու ձերմակ աղաւանի՛ն՝ բերնի ձիթեղի շինող ձգելով՝ թըռիչ առած չի փախաւ, նահատակաց յիշատակէն անմիջապէս վերջ գրամի ձայն լսելով:

ԳԵՒ ՕՏԱՐՆԵՐՈՒ ՉԱՓ

Երկար ատեն էր Հայ Բողոքականի եկեղեցի մտած չէի. այսօր մտայ: Հայ Մարտիրոսներու յիշատակին նուիրուած էր պաշտամունքն: Բեմին բարձրացաւ փրօֆ. Մեյլզոն և աղօթեց այսպէս «Ո՛վ Տէր, գիտեմք թէ ամէն բան քու հրամանովը կը լայ: Հայոց ջարդերն ալ քու թոյլտուութեամբ եղան »:

Աղօթքէն վերջ քարոզեց և ըսաւ « Հայեր ջարդուեցան որովհետև Գրիստոնեայ էին »: Երբ աղօթքն ու քարոզը իրարու քով դնենք կը գտնենք թէ Փրօֆէսօրը ըսել կուզէր—Հայք քրիստոնեայ էին, անոր համար Տէրը թուլատրեց որ ջարդուին— Ահամայ կը յիշեմ վանեցի պառաւին արոււնջը «Մեղայ, մեղա. էս ինչ օրուան մենք հասանք, էս ինչ վիճակի ինչ բախդի տիրացանք »: Կը պատմուի թէ

Հայաստանի մէկ քաղաքի մէջ օր մը նոր բողոքական եղած «եղբայր» մը իր առաջին հրատարակային աղօթքը կընէ այսպէս—Մեծապատիւ Աստուած, մեզի շնորհք տուր որ քեզ չը կծուցենք. ամ մա որ կծուցենք, վ՛այ բարամ վա՛յ »:

Կերևի թէ շատեր այնպէս կը հաւատան թէ մենք կծուցուցած ենք զԱստուած... է՛հ, ինչ ընենք:

Փրօֆէսօրին յաջորդեցին Տքթ. Պարթէն և Մր. Ալէն երկու միսիոնարներ, որոնց վերջինը ամչցուց թէ Փրօֆէսօրը և թէ զայն հրաւիրող Պ. Ելիեանը:

Պատ. Ալէն իմիջի այլոց այսպէս ըսաւ «Այսքան Հայեր հոս տեսնալու մեծ ցաւ է ինձ, զի գիտեմ թէ դուք ձեր կամով չեկաք, այլ պարագաները և բռնութիւնը ձեզ հոս նետեցին: Բայց պահ մը մոռնանք այս տխուր կէտերը և ես ձեզ քաղաքական տեսակէտէ խօսիմ քիչ մը: Ոմանք կրնան թէ յեղափոխութիւնն էր պատճառը որ Հայեր ջարդուեցան. սխալ է այդ: Եւրոպական կառավարութեանց գծուծ շահերն են որ Հայու ջարդուեցուն պատճառ եղան: Ասկէ Հայեր մեծ դաս առնելու են: Յետ այսու յոյս մի դնէք Եւրոպայի վրայ, այլ ջանացէք ներքնապէս կազմակերպուիլ ու ձեր ցաւերը դուք քարմանեցէք »:

Երիտասարդ միսիոնարի խօսքերը ընդունուեցան բուն ծափահարութեամբ և ամէնքս ալ զարմացանք: Առաջին անգամն էր որ միսիոնար մը կը լսէինք որ այսքան մաքուր Հայերէնով Հայկական խնդրոյ վրայ Հայու մը մը պէս կը խօսէր:

Միսիոնարն պատմութեան օրինակներ մէջ բերելով ցոյց տուաւ թէ մեր մարտիրոսները ապագայ ազատ Հայաստանի մը վերականգնութեան նշան տուին, և աւելցուց «Մի՛ կարծէք թէ կայ ոյժ մը որ Հայն ջնջէ աշխարհի երեսէն: Աշխարհի մէջ ոչ տեսած և ոչ ալ լսած եմ որ ազգ մը այնքան հայրենասէր ըլլայ որքան Հայն: Ամենախեղճ Հայն անգամ չուզեր բաժնուիլ իր հայրենի հողէն. իրաւունք ալ ունի, զի Հայաստանի պէս սիրուն երկիր մալ չատ քիչ կայ: Երկու հազար հինգ հարիւր տարի արեան մէջ լողացող ազգ կարելի չէ որ հանգաւորութեամբ մեռնի: Ուստի մի՛ յուսահատիք, գործեցէ՛ք »:

Երանի թէ մեր Հայ քարոզիչներն ալ այս օտարին չափ ազնիւ ըլլային:

Պոստոն նոյ. 6. ԱՊՏԱԿ

Փաթերքսին մէջ ալ կատարուած է այս յիշատակութիւնն, կէս օրէ վերջ ժամը 4ին: Պոսած են այս առթիւ երկու ամերիկացի քարոզիչներ, ինչպէս նաև Պատուելիք Բէմալեան և Պաղոյեան: Ամերիկացիներէ մին Մր. Կալլօզ ըսեր է « Ձեր Հայրենիքը յեղափոխութիւնը առաջ տարէք խոհմութեան սահմաններուն մէջ, և անտարակոյս Բիւպայի արեւը օր մը պիտի ծագի Հայաստանի վրայ »:

Պատ. Պաղոյեան ջարդուեցուն պատճառը ոչ յեղափոխական շարժմանց և ոչ ալ մեր Գրիստոնեայ լինելուն վերագրած է, այլ « Հայոց քարգանալու ու երկրին տիրանալու ուղղիւն մէջ մտած » ըլլալուն:

Այս ալ նոր պատճառ մը չէ:

Պ. Հ. ՃԱՆՃԻԿԵԱՆ
B. H. JANJIGIAN,
NO. 86 HUDSON STREET, BOSTON, MASS.

Պատիւ ունի ծանուցանել թէ Ճանճիկեան վաճառականական տունն, որ հանրածանօթ է Պարբերի, Մալթիայի և ուրիշ քաղաքներու մէջ, երկու տարիէ ի վեր իր միջոցաւ ճիւղ մը հաստատած է հոս՝ Փ. գրով գրամ փոխադրելու համար Թուրքիայ: Այս տան արտադրութեան մասին ըսելու ենք թէ Ճանճիկեան տան հետ գործ ընող ամէն մարդ զոչ մնացած է: Այս միջոցաւ Թուրքիայ զրկուած գրամը նախ Պոլիս Պորտ Ընկերութեան Գանձապետ Մր. Փիթի կը զրկուի, և սա անկէ կը յղէ գրամը Պարբերի Մր. Պարնըմի Յ. Ճէնճիկեանի տրուելու: Կը վաճառուի նաև Յրէնչ, և Հօլլանդ շոգենաւային ընկերութեանց ամսեր գոհացուցիչ գներով:

Ճանճիկեանի հաւատարմութիւնը և իւր բոլոր գործերը Պորտ Ընկերութեան Պոլսոյ դանձապետի՝ Մր. Բիթի հետ ընելը կը հաստատուի. նաև Ճանճիկեան տան հետ գործը ընողներն կապահովուին: Մ. Հ. ՀիՉԲՐԹ:

ՄԵՐ ԹԵՐԻ ԿՈՂՄԵՐԸ

(Շարունակութիւն 52 թուէն)

Այս և ասոր նման արարքներ ոճրագործութիւն ու դաւաճանութիւն են Հայ ազգին դէմ, ըսաւ, ու մեծ արատ կը բերեն Հայ անուան, նոյն իսկ իրենց վատ դերը խաղալով հասարակաց կարծիքին մէջ, որ անցեալ ազգերու ազատութեան դատին մեծ պաշտպան եղած է միշտ: Շատ մը թեր ու դէմ վիճարանութիւններէ վերջ այս եղբայրացութեան հասաւ վերջապէս թէ անհատական խնդիրները ազգ չեն ներկայացներ երբէք, միայն թէ, ըսաւ, մենք Հայ ցեղը շատ զերծ կը կարծէինք այսպիսի ոճրագործ անձերէ, թէ և Ամերիկայի ու Եւրոպայի մէջ երկակայութեան դուրս չարագործութիւններ և խարդախութիւններ ամեն օրուան դէպքեր են: Սոստացաւ ինձ այդ բոլոր անձանց անունները իրենց բոլոր մանրամասն պարագաներով գտնել ու տալ, որպէս զի Հայերէն լրագրաց միջոցաւ հրատարակ հանուն անոնք: Իր կարծիքը յայտնելով Հայկական խնդրոյ մասին շատ յուսալի կերեւէր ազատութեան մը արշալոյսին: Եզբերու ազատութիւնը միշտ դժուար բայց ստոյգ եղած է, ըսաւ: Յունաստանի, Պոլսի, Քիւրդիստանի և Կիլիկիայի խնդիրները պակաս անհարկին չէին, ըսաւ, բայց սակայն այս օր ազատութեան դրօշակը կը ծածանայ այդ երկիրներուն վրայ: Մեր յեղափոխական գործին վրայ ալ տեղեկութիւն ունենալով ըսաւ թէ Հայերը լաւ առաջնորդներ ունենալ չեն երևիր, և փոխանակ ամբողջը ի մի ձուլուելու զանազան կուսակցութեանց բաժնուած են որոնք իրարու հակառակ ուղղութեամբ քայլելով զիրար կը չեզոքացնեն ու իրարու զօրութիւն կը ջլատեն: Վերջապէս այս խնդրոց վրայ, ունեցած իր բոլոր Հասարակացութեամբ հանդերձ այս էր իր համոզումը թէ անկարելի է որ Թուրքիա ապրի 19րդ դարէն վերջ: Ուշ կամ կանուխ նորա անկումը անխուսափելի է:

Անհատի մը այս կարծիքները և անոնցմէ քաղելիք օգուտը վերջաբանութեան թողելով, քիչ մըն ալ մեր յիշողութեան առջև բերեմ լինի Բաղաքապետին ըսած անարգական խօսքերը Հայոց մասին: Այս երկու անձնաւորութեանց ըսածներն քննութեան տակ առնելով կրնանք անդրադառնալ մեր ազգային նկարագրին վրայ՝ ջանալով օճուել կարելի եղածին չափ: Թէ և մեր լինի Հայրենակիցներէն շատերուն ծանօթ է Բաղաքապետին անպատուարէր վարմունքը Հայ անձնաւորութեան մը, դէմ որ կամաւոր գրուելու գնացած էր, սակայն աւելորդ չեմ համարեր Հոս անցողակի յիշել և անցնել բուն կէտին որուն վրայ պիտի ծանրանամ:

Անուն և ժամանակ որոշ չի յիշելով միայն պիտի պատմեմ բուն իրողութիւնը որ վաւերական է ու ապացուցուած: Ամերիկեան ու Սպանիական պատերազմին ժամանակ մինչ լինի մէջ կառավարութեան ազդարարութեամբ զինուոր կուզուէր անխտիր ամեն ազգէ, Հայ մ'ալ կը ներկայանայ լինի Բաղաքապետին, լաւ նկարագրի տէր Հայ մը, ինչպէս կը վիպուէր շատ մը բերաններէ:

Բաղաքապետը կը հարցնէ թէ դուն ինչ ազգէ ես:

—Հայ եմ, կը պատասխանէ մարդը:

—Չեմ կրնար ընդունիլ քեզ, կըսէ Բաղաքապետը խոժոռ դէմքով մը:

—Բանի որ ազգի խարութիւն չկայ, կըսէ մարդը նեղացած, ինչ

պատճառ ունիք մերժել զիս որ այս երկրին համար պատերազմի կուզեմ երթալ:

—Չեմ կրնար զինուոր արձանագրել մէկը որ Պոսթոն ըսթրիտի մէջ բնակող խոզերու ցեղէն է:

Սեղծ մարդը ասոր վրայ գլխիկոր ու սրտաբեկ Պոսթոն կերթայ ու հոն իր նպատակին հասնելով ամերիկեան բանակին կը միանայ:

Հոս պզտիկ միջանկեալ մը բանալով հարկ է ըսել թէ այդ անհարկուած Պոսթոն փողոցը այն փոցոցներէն է լինի մէջ ուր շատ Հայ զիւղացիներ կը բնակին երկար տեսնէ ի վեր:

Կը հաստատուի թէ ժամանակ եղած է որ (անձամբ չեմ տեսած ես ու ոչ ալ գիտեմ թէ հիմայ կը շարունակուի թէ ոչ) այդ տեղ ապրող Հայեր կուր կը հանեն եղեր, եթէ իրենց շարժական խումբան 75 սէնթէն աւելի դայ կըսուի նաև թէ ասոնց մէջ քիչ կայ մարդ որ հազար տարին պակաս ունի: Իրր թէ քաղաքապետը այս բոլոր իրողութեանց տեղեկ ըլլալով համարձակած է այդ անարգական բառերը արտասանել:

Արդ տեսնե՞ք թէ այս բոլոր ըսուածներէն կրնանք օգտակար դաս մը հանել: Նախապաշարուելու չէ թէ քաղաքապետի մը մեր վրայ ունեցած աննպատակ ազդեցութիւնը կրնայ մեր կործանման պատճառ ըլլալ, կամ ուրիշ նշանաւոր անձի մը բարձր համարումը մեր գերութեան շղթաները կրնայ փշրել:

(Շարունակելի) ԿՍՐ. ԳՍԼՈՒՍՏԵԱՆ

ՈՒՍԹՐԻԻ ԲՈՂՈՒՔԱԿԱՆՔ ԵԿԵՂԵՑԻ ՄԸ ԳՆԵԼ ԿԱՇՆԱՍԻՆ

Ուսթրը, Նոյ. 6
Կիմանմ թէ քաղաքիս Բողոքական ազգայինը իրենց համար մի յատուկ եկեղեցի գտնելու աշխատութեան մէջ են: Հարկ չի կայ ըսել թէ այս փափուկ ժամանակի մէջ, երբ Հայ որբեր սովալուկ կը շրջին մեր օգնութեան կարօտ, այսպիսի մի ծախք ընել աւելորդ է:

Մեր բողոքական եղբարք, որք թուով 20ը չեն անցնիր, ինչու Պոստ ընկերութեան տուած սենեակէն գոհ չեն ըլլար: Հ. Թ.

«ԲԻՉԸ ՇՍՏԻՆ ԿԵՐԹԱՅ»

Յօղ Բիվլըր, 1 Նոյ.

—Սա ինչ կարգեր են իրարու ետև շարուած. մէկ, երկու, երեք... :
—Հարկ չի կայ համբել, քառառասուն հատ են: Ասոնք Սրբազանը դիմաւորելու են եկեր:

—Չրի են այս կառքերը.
—Չրի. Անոնց ամէն մէկին համար 3-4 տարի ծախք եղած է անշուշտ:

—Այս ինչ ձայներ են որ կը լսուեմ Արևելքէն:

—Անատուրի մէջ գտնուող Հայ որբերու ազգայիններն են, որք Հաց կը խնդրեն արտասահմանի Հայերէն:

—Հապա արտոնք ո՞վ են որ կուրծքերնին բաց, ուսերնուն վրայ հրացան, լեռնէ լեռ, ձորէ ձոր կը ցատկեն, ու երբեմն ձեռքերնին դէպ Ամերիկայ երկնցոցած օգնութիւն կը խնդրեն. ասոնք քաջերու կը նմանին:

—Մեր ազգի ազատութեան համար աշխատող անձնուէր քաջերն են անոնք, որք երբեմն օգնութիւն կուզեն դէնք որ պիտոյք գնելու նըպատակաւ միայն:

—Կը ցաւիմ, եղբայր, ի սրտէ կը ցաւիմ ձեր ազգին վրայ: Ուս-

թըրի մէջ եղած այդ ծախքերը եթէ ձեր որբերուն ու քաջերուն յատկացնէիք աւելի կարևոր գործ մը ըրած պիտի չըլլայիք: Սրբազանը աւելի գոհ պիտի չըլլար եթէ այդ դրամներն, փոխանակ կառքի ընկերութեանց հազարներուն վրայ բարդուելու, երթային կեանքեր փրկելու ձեր քարուքար երկրին մէջ... : Սորվեցէ՛ք, բարեկամներ, թէ ձեր առաջին պարտականութեանց մին ձեր փրկուցութեան համար աշխատելու մէջ մէջ կը կայանայ:

ԱՐՄԻ

ԲՍՂԱՍԻ

Բաղձայի լինել կրակի բեկոր, Հրդեհել Պոլսին ու քէօք Երուզի, Ոչ թէ շահելու անուն փառաւոր, Այլ վրէժ առնել արեան Պիթիւզի:

Մի ոգի լինիլ աննիւթ և անշունչ, Երթալ ու գտնել Հարէմի լազոտ. Կուրծքին խոր մխել դաշոյն մահաշունչ, Հաշունչ, Ու քաշել լվել դաշոյնս արիւնտ:

Ահա շահնի պէս որոտամ ու ժգին, Հարուածներ տեղալ դէպ յաջ և Երեւել պահուն թօթափիլ կեանքի լուծը ծանրակիր, լինիլ ՆԱՀԱՍԱԿ:

Չեմ ուզեր ճակտիս պահներ դափնի, Ոչ էլ դամբանիս արձան, ծաղկէփունջ. Թող տապանագիրս սակայն սա լինի. «Ահա Հոս պառկի անշուք, անտերունչ,

Բորբոքեալ մի կայծ՝ վրէժ Հայ ազգի. Թրթուռն քնարի, դաշնակի փոխան, Նա իւր սիրտ կապեց սուրի դանակի. Ոյց ներքե ժանտից ոգիք կը մխան:

Ոչ մի շիթ արտօս, ոչ կանայք լալկան, Ոչ բանաստեղծի թուղթ, թանաք, գրիչ Մեծաղբոր քարոզ կամ դողող մի բան:

Թող իմ հանգստիս լինին խանգարիչ:

Երբ երեկոյեան ուռնիքի վեր Երեւիս, լուսնեակ, ի նշոյլ բեկբեկ. Յայնժամ երկիւղիւ դիտէ դու զիմ վեր:

Ծածկիր ընդ ամպով ու լաց աղբեկ: Լին, Նոյ. 18 96 ԱՐՄԵՆԱՍԻ

ԱՆՊԱՍՏՈՒԹԻՒՆ, Մ՝ԱԼ

Լօվէլ, Հոկտ. 30

ՏԻԳՐԻՍԻ ընթերցողները կը յիշեն անշուշտ տեղւոյս խումբաներուն խնդիրը, և այդ մասին գրուածներն. բայց այդ գրութիւնները ունէ ազդեցութիւն չունեցան անոնց վրայ: Ամսոյս 23ին, Շարաթ երեկոյ, կարգ մը Հայեր Մազկերտցոց տան մէջ իրենց սովորական գործը—խաղը—կսկսին: Հայ մը, որ բաւական ատեն ի վեր ասոնց ետեւէն կը շրջի երկր, երկու ստիկաններ առած, Մազկերտցոց տունը կերթայ: Ոստիկանը չորս խաղացողներուն երկուքը կը ձերբակալեն, իսկ միւսներն կը յաջողին փախչիլ: Այս դէպքը տեղի կուենայ տուած տեան ժամը մէկին:

Երկու շաբթի աւուր թերթերն գրեցին թէ Հայերն Սուրբ օրը բաղդախաղով պղծած ատեննին ձերբակալուած են: Ահաւասիկ նոր անպառնութիւն մալ:

Յիշեալ անձերն երկու շաբթի օր դատուելով տասական տարի տուգանքի դատապարտուեցան:

ՈՒՍ

ԱՐՓԻԱՐԻ ԽՆԴԻՐ

Պ. Կ. Կոչկարեան Սէլիմէն կը գրէ և մատնանիշ կընէ թէ վիճարանողք խնդրէն շեղած են բոլորովին: Կը պատասխանէ «Դաշնակցականի մը» գրածներուն ու դիտել կուտայ թէ Դրօշակ լուռ է մնացած Արփիարի խնդրին մէջ: «Դաշնակցականաց թիւ 2 պատգամաւորը, կըսէ ի մէջ այլոց, լինի մէջ հարցման մը պատասխանելով Արփիարը սպաննելու փորձին համար ըսաւ թէ մի անհատ անձի գործ էր. և անոր դէմ եղած ամբաստանութեան համար կարծեց թէ պատուոյ ատեան մը կազմուելու ջանքեր կը ըլլային: Բայց չի կազմուեցաւ ատեանը:»

Ուսթրէն Նորայր կը ցաւի որ վիճարանութիւնն դեռ լոյս մը չի սփռեց բուն խնդրոյն վրայ, այլ ընդհակառակը աւելի դժուարացուց զայն. և հրաւէր կը կարգուայ Դաշնակցականաց որ ձեռնհաս մարմինէն կամ գործէն ծանօթ անձերէ հրապարակ դալ պահանջեն այս խնդիր լուծուելու համար:

Լօվէլէն խօսան կը պատասխանէ «Ինչու տօքու մանները» յօդուածին, և ցոյց կուտայ թէ բուն խնդիրը տօքու մաններուն վրայ է: «Պ. Լեոնեան, կըսէ յօդուածագիրը, հրապարակ կը կանչէ զԱրփիար եւ կըսէ թէ հրամայէ պատուոյ ատեանի, էֆէնիտի, հրամայէ չափուիլ: Ծիծաղելի բան. կերևի Լեոնեան ինքզինքը Դաշնակցութեան բերանը կը նկատէ, բայց Օսկանը պէտք է հրատարակէ այդ խօսքերը, լսեցի՞ր:»

Պոսթընէն Ա. Ա. կը ցաւի Դաշնակցականաց փախուստին վրայ, որով խոյս կուտան պատուոյ ատեանէն, և կը խորհի թէ Պ. Լեոնեան թերևս խորհրդաւոր տօքու մաններուն վրայ տարակուսելով՝ սկսած է Մարտը թղթախաղով խճճտնել համար նիւթեր փնտուել: Յօդուածագիրը վարագործին ետև ապացոյցներ չի գըտնար, այլ ահագին լուռ ջնջել մուկ մը կը ծնի: Ա. Ա. կը հուստայ թէ ժողովուրդը Արփիարի օձիքը չէ որ չի պիտի թողու, այլ Դաշնակցականացը, եթէ շարունակեն խնդիրը այսպէս ձգձգել, ու տօքու մանները երևան չի հանեն:

Ըսթամֆըրէն Պ. Բուզոյեան կը ծանուցանէ թէ իւր հասցէն 48 Փրսիֆիք փողոցէն փոխած է ի թիւ 21 Մէյն փողոց:

ՀԱՅ ՅԱՃԱՆՈՐԴՆԵՐՈՒՍ

Կը ծանուցանեմ թէ ի դիւորութիւն՝ դեղարանիո նախկին տեսուչը Պ. Ստեփանեան ամէն երեկոյ ժամը 6էն մինչև 8 պիտի ծառայէ իր Հայրենակիցներուն:

Պատիւ ունիմ ըսել թէ ասկէ վերջ «Ուրիշագոր հէր վիկըր» անուն հրաշալի մագի դեղը պիտի ծախենք շեշը 50 սէնթի: Հմուտ բժիշկներ կը վկայեն թէ իր տեսակին մէջ լաւագոյնն է մագերը զօրացնելու, բուժելու և նախնական գոյնը պահպանելու համար:

Տակառ մը զուտ Նորվեկեան ձուկի իւղ բերել տուած եմ, որոյ լիպրան 45 սէնթի պիտի ծախենք:

Դեղագիրներն կը պատրաստուին աստան և թարմ դեղերէ: Փորձեցէք:

ՈՒՆՏՍՐՐ ՏՐԸԿ ԸՍԹՕՐ, Մաքս Հանսպերկ 472 Յրդ ափիւ, Նիւ Եորք:

